

ՕՐԱՊԱՐԻՐ

20 ՓՐՅ.



ՓՐՅ 20

Զ. ՏԱՐԻ 26 ՐԱՄԱԶԱՆ 1291 ԽՏՐԵԼԼԷՉ 185 ՀԻՆԴՇԱԲԹԻ 24 ՀՈԿՄԱՐ. 1874 Ն. Տ. ՆՈՅՆՄԱԲԵՐ 5 ԹԻԻ 1372

Ա Չ Գ Ա Յ Ի Ն

Մասին մէջ ունկնդրութեան իրաւունքս վերնագրով յօդուած մը տեսնուեցաւ՝ որով հաստատել կուզուի թէ՛ ընդհ. ժողովոյ ունկնդրութիւնը իրաւունք է ժողովրդեան և շնորհ չէ :

Այն արտօնութիւնը՝ որ փոքրիկ մաս մը կրնայ վայելել ու ամբողջ ազգը չը կրնար վայելել՝ ժողովրդական իրաւունք չը կրնար համարուիլ :

Եկեղեցի երթալ իրաւունք է, ուստի ուր որ հայ կայ՝ հոն տեղւոյն ժողովրդեան իրաւունքն է տեղը ամենուրեք մեծութեամբ եկեղեցի մ'ալ կայ :

Տղադ ազգային դպրոց մը տալ իրաւունք է. ուստի ուր որ հայ կայ՝ հոն տեղացի ժողովրդեան իրաւունքը տեղը տանելու մեծութեամբ դպրոց մը կայ :

Քուէ տալ ընտրութեան իրաւունք է ընտրողաց, ուստի ուր որ ընտրող կայ՝ հոն ընտրողաց քուէթուղթն ընդունելու քուէտուփ ս'ալ կայ :

Արդ եթէ ընդհ. ժողովոյ ունկնդրութիւնն ալ իրաւունք է ժողովրդեան՝ պէտք էր թէ ուր որ հայ կայ՝ հոն ընդհ. ժողովոյ սրահ մը ըլլար տեղւոյն ժողովրդեան այդ իրաւունքը տեղը տանելու մեծութեամբ :

Սակայն ասոնք մէկդի ձգենք, և մեր հակառակորդաց սա հակասական կէտը քննենք :

Ասոնք ընդհ. ժողովոյ ունկնդրութիւնը իրաւունք է ժողովրդային ըսելնուն հետ՝ կրեն նաև թէ՛ ի պահանջել հարկին դռնփակ նիստ ընելը կ'ընդունինք : Շատ լաւ, բայց եթէ ընդհ. ժողովոյ ունկնդրութիւնը ժողովրդային իրաւունք է՝ ուրեմն դռնփակ նիստ ընելը՝ այսինքն ժողովուրդը ունկնդրութեան սրահը չ'ընդունելը անիրաւութիւն է : Անիրաւութիւն մը ոչ ի պահանջել հարկին կրնայ ընդունուիլ և ոչ ուրիշ պարագայներու տակ, այլ անիրաւութիւնը միշտ անիրաւութիւն և իրաւունքը միշտ իրաւունք է :

Ասոնք եթէ ի պահանջել հարկին անիրաւութիւնը կ'ընդունինք ըսէին՝ այն ատեն թերևս ըսածնին՝ թէ և անընդունելի՝ բայց տրամաբանական կ'ըլլար, սակայն մէկ կողմէն ըսել թէ ի պահանջել հարկին ընդհ. ժողովը ժողովրդեան իրաւունք դէմ իւր դռները փակելու իրաւունք ունի, և միւս կողմէն ըսել թէ՛ ունկնդրութիւնը ժողովրդային իրաւունք է, ասկէ աւելի անհեթեթ իրաւաբանութիւն մը չը կրնար ըլլալ :

Երեսփոխանաց խօսքերն իմանալ ժողովրդային իրաւունք է, և ասով կ'ընդունուի իրաւունքը, որպէս զի իր քուէ տալիք անձին համարն առած ըլլալով՝ ըստ այնմ տայ իր քուէն :

Արդ ըստ որում աս իրաւունքը իբր ժողովրդային իրաւունք անբռնաբարելի է՝ հարկ էր արպիսի միջոց մը ընտրել՝ որ ամեն մարդ կարենար վայելել իր իրաւունքը, ահա այս միջոցն է ատենագրութեանց հրատարակութիւնը, որով ամեն իրաւունք տէր իր իրաւունքը կը վայելէ և այս իրաւունքին հակակշիռ անն սահմանադրական ազգ ընդունած է տպագրական ազատութիւնը, որ ընտրողն ատենագրութիւնը կարգալէն ետք կարենայ իր դատելու իրաւունքը լովին գործարել այդ տպագրական ազատութեան միջոցաւ :

Այս նախնական սկզբնքը այսպէս ընդունուելէն և միջը գտնուելէն վերջը կուգայ երեսփոխանաց խօսքերն խօսուած վայրկեանին սնձամբ լսելու ինդիրը :

Ասոր իրաւունք անը տալու համար պէտք է բնտու այս իրաւունք դէմ պարտիք մ'ալ որ երկու կողմէն հակակշիռ և իմնական արդիւնք մը յառաջ բեր :

Անձամբ ունկնդիր լալու իրաւունք դէմ՝ պարտիք կը դնի լուծութիւնը՝ ինչ որ ալ ըլլայ ժողով բարեկարգական վիճակը :

Աս ինչ զարմանալի իրաւունք է որ լուծեան պարտաւորութեամբ կը հակակշիռի. մինչդեռ լսելու իրաւունքին անմիջական հակակշիռն է բնականապէս խօսելը, իսկ հոս ընդհակառակն լսելու իրաւունքին դէմ խօսելու ելնելը անիրաւութիւն կը համարին. մինչդեռ լսելու արտօնութիւնը իբր շնորհ չ'ընդունուած՝ անկարելի է որ լուծութիւնը պարտաւորութիւն ընդունուի :

Կ'սպասէինք որ մեր հակառակախօսք պարզեն այս կէտերը, որ ժողովուրդն ալ հասկնալով թէ իր ունկնդրութեան մէջ ունեցածն իրաւունք է թէ շնորհ, պարսպ տեղը կ'ընդհ. ժողովոյն իր դռները երբեմն գոցելը անիրաւութիւն ըմբռնելով ընդհ. ժողովը որ ժողովրդային իրաւունք պահպանն ըլլալու պաշտօնն ունի՝ ժողովրդային իրաւունք բռնաբարելը չը համարէ. և կամ ժողովը համոզուելով որ ունկնդրութիւնը ժողովրդային իրաւունք է թէ չէ՝ անգիտաբար անիրաւութիւն չը գործէ իրաւունքը շնորհ անուանելով և ժողովոյն դռները երբեմն փակելով :

ԱՉԳԱՅԻՆ ՓՈՒՍՈՒԹԻՒՆ

Ք. Լիմոնեան էֆէնտի առաջարկած Ազգային փոխառութեան վրայ մեր դիտողութիւնը այսօր հրատարակելիքնիս խոստացանք. ասիկա մեզի համար պարտք մ'էր, ինչպէս նաև կը հաւատանք թէ բոլոր մեր մեծապատիւ պաշտօնակցացն ալ պարտքն ըլլալու է, կամ ի նպաստ և կամ հակառակ իրենց կարծիքն յայտնելու և հասարակութեան միտքը լուսաբանելու այնպիսի ինդրոյ մը վրայ, որուն գուցէ ամենէն կարևոր ինդիրն ըլլալու ժամանակը եկած ըլլալու է եթէ ոչ արդէն ուշացած իսկ :

Մեր տասնևհինգ տարուան Սահմանադրական վարչութեան շրջանին մէջ, ըստ բաւականին փորձառու եղած ըլլալու ենք թէ, մեր բազում աշխատանաց արդիւնքն եղող ինչ ինչ որոշումներուն ապարդիւն վիճակի մը մէջ մը

նացած ըլլալուն միակ պատճառը, գըրամ չունենալին եղած է, ինչ ինչ կէտերու մէջ մեր ազգային արժանապատւութեան վայել գիրքի մը մէջ գործունեութեան միակ արգելքը՝ դրամ չունենալին եղած է, ինչ ինչ ազգագրութեան նախնական լոյս տեսնելէն առաջ վիճակուն միակ շարժառիթը՝ դրամ չունենալին եղած է, մէկ խօսքով մեր ազգային դատարարական, այն է ազգին ապագային գրեթէ մեռեալ վիճակի մը մէջ մնացած ըլլալուն միակ պատճառն ալ՝ դարձեալ դրամ չունենալին եղած է և պիտի ըլլայ, եթէ տակաւին վարանինք հիմնական բարւոքում մը ձեռք բերելու կենդանի փորձ մը ընելու:

Մինչև հիմայ, Ազգ. Մտնուկին ելլեմուքն կանոնաւորելու, կամ բուն իսկ ճշմարտութիւնը ըսելու համար, ազգային եկամուտիս, դարուս, Ազգին ապագային, և ազգային արժանապատւութեան պահանջած վայելուչ դիրքին համապատասխանող վիճակի մը վերածելու համար ըրած բոլոր ջանքերն ապարդիւն մնացին, որովհետեւ չը կըրցանք այն հին ազգային հանգանակութեան և ազգային տուրքին դրութեանէն դուրս բան մը ընելու, որոնց երկուքն ալ զԱզգը բաղձացուած վիճակին վերածելու անկարող էին, և իրմոնճեան էֆէնտի ասկից առաջ, ասոնց մէջ մէկուն համար մուրացկանութիւն և միւսին համար ալ բռնութիւն ըսած ըլլալովը անխրատութիւն ըրած չէր. բայց պէտ և բառերը քիչ մը խիստ, բայց կատարելապէս ճշմարիտ էին. որովհետեւ կանոնաւոր վարչութեան մը անունին իսկ չի վայել անկից ասկից հանգանակութիւն ընելով վարչութեան շոգեշարժ մեքենային շարժմանը համար իբրև ածուխ անհրաժեշտ պէտք եղած դրամը հայթայթել, և ասոր և ոչ մի օրինակը կրնանք գտնել լուսաւորեալ սկզբունքի վրայ հիմնուած ու է վարչութեան մը վայ. գալով ազգային տուրքի, ասիկայ ալ իր մասնաւորիչ հանգամանքովը այնպիսի կերպարանք մը առած է, որուն համար ՚ի զուր բառարանները կը թղթատենք բռնութեանէ աւելի մեղմ բառ մը գտնելու:

Այս ազգային հանգանակութեան և ազգային տուրքի ներկայ դրութեան վրայ, գործը աւելի լուսաբանելու համար մանրամասնութեանց չենք ուզեր մոնել, վասն զի մեր հանելիք եզրակացութիւնը հակառակ մեր փափաքանաց՝ շատ դառն պիտի ըլլայ, և քանի որ ազգային տուրքի պատշաճ և արդար մէկ դրութեան մը մօտ ատենէն ընդունելութեանը և գործադրութեանը մեծ յոյս մը չունինք, և տակաւին ազգային եկամուտնիս բարւոքելու ուրիշ բանաւոր միջոց մը որոշած չենք, հիմակուց հին դրութեան շէնքին հիմը խորտակելու փորձ մ'ալ չենք ուզեր ընել:

Բայց վերջապէս բան մը ընել պէտք է:

Վարանումը, մեր վիճակը աւելի կը ծանրացնէ:

Իւր ահա այս նեղ և ստիպողական վիճակնուս մէջ է որ իրմոնճեան էֆէնտի ոչ միայն ազգին տարեկան երկու հարիւր հազար դրչէն աւելի եկամուտ մը ապահովելու, այլ և տասնեմէկ տարուան միջոցի մը մէջ, որն որ ազգաց կեանքին մէջ երկվոյրկեան մը անգամ չի նշանակեր, երկու միլիօն ֆըրանքի գումար մ'ալ ազգին շահեցնելու եղանակ մը կ'առաջարկէ, անպիսի ճշդագոյն հաշով մը, որչափ որ ճիշդ է երկու անգամ երկուքին չորս ընելը:

Արդ մերժեմք թէ ընդունինք այս առաջարկութիւնը, որոյ արդիւնաւորութեանը համար մի միայն հաստատուն կամք մը, և անյողող ջանք մը կը պակսի. մէկ քանի ամսուան աշխատութիւն մը, որն որ անհամար տարիներու օրհնութիւն կրնայ բերել իր ետեւէն:

Իրմոնճեան էֆէնտի, իր մասնաւոր դիրքին մէջ, այսպիսի գաղափար մը յղանալէ աւելի բան մը չի կրնար ընել, որովհետեւ անկարելի է, ուրեմն անկից աւելին ո՞վ պիտի ընէ:

Ի հարկէ ձեռնհաս մարմինը՝ իր գըրամը ունենալով Սրբազան Պատրիարք Հայրը, որոյ բարձր ազգեցութիւնը մի միայն հաստատուն կամքի մը և անյողող ջանքի մը կը կարօտի գործը աստուայն դրութեանը զլրատելու:

Հասարակութեան կողմանէ գործին մեծ ընդունելութիւն մը գտնելուն աւելին տարակոյ չունինք. նա մանաւանդ որ առած տեղեկութիւններնուն նայելով յիշեալ փոխառութեան ամեն մէկ բաժինը մի միայն քառասուն ֆըրանք պիտի ըլլայ, որ տարին չորս անգամ 140 ֆրանքն մինչև տասը հազար ֆրանք շահելու ազգ մը պիտի ունենայ, և բոլոր բժնիթղթերէն եօթնին մէկը անպատճառ շահելով, չի շահող թիւերուն ալ քառասունական ֆրանքը ամբողջապէս եւ պիտի տրուի:

Նմանապէս բաժնե դերերուն, Օսմանեան տէրութեան մէջ գտնուած ամենէն մեծ ապհովութիւն, պիտի տրուի թէ իրենց ուսած մայր գումարին և թէ շահած ուսմանուն համար:

Այսպիսի պ ազաներու տակ եղող փոխառութեանը բաժիններուն, որոնք մեր առա տեղեկութեան համեմատ 70000 էն էլի չի պիտի ըլլան, մի միայն Պօլ մէջ սպառելիքն ալ իրաւաբ կրնք յուսալ, թողունք Ռուսաստան և սմանեան երկրի վաճառչահ և հարնակ բազմաթիւ քաղաքները:

Արդ ինչպիսիք ըսինք, իրմոնճեան էֆէնտի այսօր և ազգագրութեան ծառայութիւնը ականացնելու համար,

մի միայն այն հաստատուն կամքը և անյողող ջանքը կը մնայ տեսնել, որոնցմով ինչ ինչ վարչութիւններ կըրցած են իրենց ազգերնուն նախնական ապագաներ պատրաստել, և իրենց անուններնին ալ Պատմութեան մէջ փառաւոր արձանագրութեամբ յիշատակել ալ:

ՅՈՎ ՀԱՆՆԵՍ ԱՂԱ ԱՅՎ ԱՉՈՂ ՍՓԻ
(Շար. և վերջ տես թիւ 1370)

Արուեստ ինկտասաներորդ դարու ըսուած կիսամեայ օրագրին Բ. տարուան Ժ. թերթին մէջ արուեստահանգիստին վրայ գրուած յօդուածին հեղինակը այսպիսի գովեստիւք կը յիշատակէր մեր Հայկազն նկարիչը:

Չեմք կրնար մեր այս երկրորդ յօդուածը լմնցունել առանց մէյնը կանգ առնելու, ակնկառոյց ամբողջն պէս, նոր Ռուսիոյ դաշտավայրացը մարմնող Արևուն, Հոռոսի Տաճկի սըրճանոցին, Ժովոն վրայ գըրկած լուսընկային դիմացը, նկարիչն Պ. Ա. Վաղովաքի, կարծես թէ բնութեան բոլոր հիանալի անդրադարձութիւնները, ու անոր երանգոցը բոլոր կենդանութիւնն ու շքեղութիւնը իւր վրձնոյն տակն է նուաճեր: Դաշտօրէից կարմիր ու կապուտակային երկինքը՝ ուր որ արևուն հրեղէն գունտք կը լողայ, ամենէն աւելի սքանչաքեալ աչքերուն անգամ չը ներեր յամառ հայեցողութիւն մը ընելու:

Անկարելի է որ վրձին մը առաւելագոյն ճարտարութեամբ դաշտօրէից պաղպաղափայլ ձեանը վրան գարկած լուսոյն շոգելից ալ լուսնի բերեկեալ ճառագայթից ծովուն փոսփորացեալ ալեացը վրայ ըրած անդրադարձութիւնը կարենայ նկարելու: Թիւթեան այսպիսի զօրաւոր ու այս աստիճանի ճշգրտափայլ ներկայացուցման մը դիմաց մարդուս միտքը հապաչի կը մնայ:

Ինձի գալով՝ ես քանի մը բոպէ միայն կարող եղայ այս նկարագատկերներն ուղղանող լոյսը նկատելու. ինչպէս նաև լուսաւորեալ բնութիւնը որ շուտով մը աներևութ կըլլայ՝ կրակի ովկիանոսի մը մէջ ընկղմելով: Բայց որչափ ալ որ այս պատկերներուն հրապուրքն ու ախորժը կարգէ դուրս բան մ'ալ ըլլայ, բայց հասարակութիւնն ալ ի ծի պէս չկրնար երկար ատեն կենալ նկատել, վասն զի այն անկարելիք երանգոց ակնախտիդ ներդաշնակութեանը դիմաց աչքը կը յոգնի կըմնայ:

Թղթակից կոչուած օրագիրը օգոստոսի 25 թուոյն մէջ այսպէս կը գրէր. Օտարագրի ոք է Ա. Վաղովաքի, որուն մեծամեծ շքեղափայլ նկարչական պատասաւները որ աւելի զօրաւոր տպաւորութիւն մը ընելու համար գունախառնութեան մասնաւոր դրութիւն ու կերպ մ'ալ ունին, ամենուն աչքն ու դիտողութիւնը իրենց կը ձգեն: Պ.

Այլազգիքին վրձինը հիասրաշ մոգութիւն մը ունի, և իւր նկարագրապատկերներէն մէկ քանին այնպիսի անհասկացալի յաջողութեամբ մը նկարուած են՝ որ տեսնողին աչքը կը խաբեն :

Մարը մանող արևուն գեղաբորբոք երանգները, — Յորենախիտ դաշտ մը որուն վրայէն անցնող հովիկը ցօղուններուն գլուխները կկթէ, — Երկրիս վրայ տարածեալ ձիւնը՝ որ պատանքի մը պէս մեռելին ձևերը կէս մը կը հանէ, — ու Գիշերուան լուսինն նշողները որ կը ձգուին կերկնան ու կը ծփծփան ծովուն ալեացը վրայ, չեմ գիտեր թէ ո՞վ ոք երբէք կրցեր է Պ. Այվազովսքիէն աւելի լաւ գուրս ցատքեցնել :

Փարիզու կայսերական Մեղու օրագիրն այսպէս կը յայտնէր իւր գատաստանը օգոստոսի թուոյն մէջ :

Հանգիստարանին մէջ ամենէն մեծ անուն ստացողներուն մէկն է անտարակոյս Պ. Այվազովսքի, որ Խորմու թէոզոսիա (Բէֆէ) քաղաքը ծնած է և ֆեթրպուրկի ճեմարանին աշակերտ է : Այվազովսքի եօթը պատկեր ունի արուեստահանդէսին մէջ, մինչև հիմայ ես երեքը միայն տեսայ, բայց այն չափուն ալ բաւական է այն նկարչին և իր վրձինին ինչ ըլլալը իմանալու համար : Արևուն մարմնալու ժամանակ դաշտօրէից տեսիլը իրուցնէ հրաշալիք մըն է ազդեցութեանն ու գոյնին կողմանէ : Մըշուչի մէջ առգիս անդին ցրուած հազարաւոր ոչխարներուն վրայ հազարաւոր սքանչելի վարդազոյն ցոլացմունքներ կան : Կզգաս թէ այն տեղուանքը նոյն միջոցին բնութեան շքեղաշուք ժամ մըն է, և Ռուս գեղացւոյն քերթողական վայրկեան մը : Անոր համար տեսնողին վրայ ալ սաստիկ տպաւորութիւն կընէ : Կարծես թէ իրուցնէ այն անհուն բացատանեայց լուսութիւնը գացեր տեսեր ես. այն պատկերին առջև աղօթք ընելու փափագ մը կուգայ վրադ . . . : Իսկ դաշտ ցորենոյ՝ ի փոքրն Ռուսիա, ի հասարակ աւուր, այնպէս սքանչելի է որ կէս օրը անկէց աւելի լաւ բացատրելու անկարելի է : Կզգաս այն բիւրաւոր ցօղուններուն մէջէն ելած ջերմութիւնը. արևուն ճառագայթները զքեզ կը յոգնեցնեն, միտքդ կուգայ մանկութեանդ օրերը (և ո՞վ կայ որ այսպիսի յիշատակութիւններ չունենայ) երբոր եզրպտացորեններու կամ ցորեններու կամ ձիթենիներու մէջէն քալելու ատենդ ինչպէս կ'ըսէ Տանթ, այն պղտի ճամբաներէն անցնելի որ փուշերու խուրձերով գոցուած են :

Հ Ե Ռ Ա Պ Ր Ա Լ Ո Ւ Ր Ք ԳՅՂԶԻԱ

Բարիք 3 նոյմ.

Պ. Կրէվի իւր ընտրելութիւնը ետ

առաւ 'ի նպատակը Լըվազովսքի : Բա-տը-Գալէի համեմատական քուէարկութենէն հանրապետական ընտրելիին վրայ 10 000 քուէից առաւելութեամբ պոնաբարթեան ընտրելիին երես փոխան ընտրուեցաւ :

ԱՒՍՏՐԻԱ-ՀՈՒՆԳԱՐԻԱ

Վիէննա 3 նոյմ.

Խորհրդարանը մերժեց պատգամաւորաց ժողովոյ անդամոց ընտրելու եղանակին օրէնքը փոփոխելու առաջարկութիւնը : Բաժիններով կազմուած ընկերութեանց վերաբերեալ օրինաց վիճաբանութեանն սկսեց :

ԳԵՐՄԱՆԻԱ

Պերլին 3 նոյմ.

Կը հաւաստեն թէ տ'Արնիմ կոմսին քարտուղարին ձերբակալութիւնը պարզապէս շինծու լուր մ'է :

ՍՊԱՆԻԱ

Պայօնա 3 նոյմ.

Տօն ֆարրուսի եղբայրը տօն Ալֆօնս Սպանիայէն մեկնեցաւ Աւստրիա վերադառնալու համար :

ՆԵՐՔԻՆ

Օլտէնպուրկի գահաժառանգ մեծ դուքսը երեկ մայրաքաղաքէս Պրուսայի ջերմուկները մեկնեց է :

— Կը հաւաստեն թէ ճէվտէթ բաշայի Եանեայի կուսակալ անուանելէն յետոյ Պետական Խորհրդոյ փոխնախագահութեան պաշտօնը բարձուեր է :

— Անցեալ շաբթու թամիզի նաւաչինութեան հեծարանէն իջած օսմանեան քօրթէթին անունն է Մէտափէ, որն որ 349 ոտք երկայնութիւն և 39 ոտք լայնութիւն ունի, 3330 տակառաչափ ալ պարունակութիւն ունենալով : Մեքենան 1200 ձիու ոյժ ունի, և 12 հատ խոշոր Արմսթրոնկ թնդանօթ սիտի կրէ : Սպառազինութիւնն աւարտելուն պէս ճանաչող պիտի ելնէ շոգենաւը, որն որ գարնան սկիզբները հազիւ հոս կրնայ հասնիլ :

— Այտրի վիճակին մէջ ալ հնձոց նուազութիւն տեսնուելով, կուսակալը լինդերը է Բ. Դրնէն որ յիշեալ գաւառէն դուրս արժաթ հանելն արգելուելով, հոն տարուած ցորենէն ալ մաքսային տուրք չ'առնուի :

— Յէշէնեի կոմսը իւր կազմել սկըսած ջրհանակրաց նոր խմբին կրթութեանցն սկսեց է, որք են մարմնամարզութիւն, շղթայաչինութիւն, հանգուցաւոր և ճանկաւոր չուաններով կըրթութիւն և մարդ ազատելու յատկացեալ չուանէ սանդուխներու գործածութեան փորձեր : Ասկից զատ իւրաքանչիւր ջրհանի համար վեց մարդ պիտի գործածուի, ջրհանը երկձի կառքի մը վրայ գրուելով, որոյ ետևի կողմն ալ

այդ վեց անձինքը պիտի նստին ուրիշ երկրորդ սայլ մ'ալ, որուն մէջ տակաւ մը ջուր պիտի գտնուի, ջրհանակիր կառքին ետևէն պիտի երթայ : Պէտք եղած հրամանները շեփորի (պօռաղան) ձայնով պիտի տրուին :

— Լոնտրայի թայմը լրագիրը իւր կ. Պօլսոյ թղթակցէն ընդունած հոկտմ. 19 թուականաւ հետևեալ հեռագիրը կը հրատարակէ :

«Բ. Գուսը, կ'ըսէ, հրաման զրկեց իւր 4րդ. բանակի հրամանատարին, յայտնելով թէ Պարսկաց կառավարութիւնը ազդու միջոցներ ձեռք չ'առնելուն համար իւր հպատակացը դէմ, որք սահմանազուխն անցնելով օսմանեան հողին վրայ աւարտութեանց և յափշտակութեանց ելնելու ետևէ են, օսմանեան բանակն այսուհետև պիտի հալածէ այդ չարագործներն մինչև որ բռնուին, եթէ հարկ ալ ըլլայ զանոնք հալածելու համար պարսկային սահմանազլիէն ալ անդին անցնելով » :

— Միթիթարեան Սիբարանութենէն Սօրղուճեան Հ. Յովհաննէս վարդապետը, որ հակահասունեանց մասին յարած էր և ասոնց զխաւորներէն մին, հիւանդ իննալով Բերայի մէջ, Գաբու չինեան կարգէն կրօնաւորներէն մին կը կանչէ, և խոստովանելով կը յայտնէ իւր դարձը՝ թէ այսուհետև Հասունը միայն կը ճանչէ Կիլիկիոյ օրինաւոր կաթողիկոսը, և այս կերպով Սօրղուճեան վերապատուելի պապին բանագրանքէն կ'ազատի :

— Այս երկուշաբթի օր Ռուսաց դեսպանն և իւր տիկինը, Վեհ. Սուլթանին հրաւիրանօք, Երևոզ Բէօշքի դղեակը գացին Պ. Այվազովսքիի բազմաթիւ նկարները տեսնելու, որոց մէջ երանգից և հեռանկարաց մասին նշանաւոր սեպուածներն են, 1. Վոսթրի ծովուն մէջ Հիւսիսային հովիտ բռնուած Բազար Գայրդը մը, 2. Պէրութի տեսքը՝ ծովուն կողմէն առնուած, 3. Օսմանեան նաւատորմին Տարտանէլէն դուրս ելնելը : Այս առթիւ կը հաւաստեն թէ ճարտարարուեստնկարիչը զարմանալի արագութեամբ մը գծած է այս պատկերներն, որոցմէ Պէրութի տեսլանկարը՝ 24 ժամու մէջ աւարտեր է :

ԱՆԿՐԱՆ ԾՈՒԵՇԱՐԺ ՄԵՔԵՆԱՑ

Թրամվէյի կառքերը քաշելու համար հիմա Ամերիկայի քաղաքներէն ումանց մէջ առանց կրակի շոգեշարժ մեքենայ մը կը գործածուի : Ծոգեշարժ մեքենային կաթսան կը լեցուի եռացեալ ջրով որուն շոգին բաւական է մեքենան շարժելու և թրամվէյի կառքն անոր քաշել տալու մինչև եօթն մղոն տեղ : Այլ կրակ շոգեշարժ մեքենայ գործածելուն նպատակն է կառքերը քաշելու համար ձի չը գործածել, միանգամայն հասարակ շոգեշարժ մեքենաներուն դուրս տուած ծուխէն և ուրիշ նիւթերէն ազատ մնալ : Այլ կրակ կոչ-

ուած շոգեշարժ մեքենան այնպէս շինուած է որ եռացեալ ջուրն ընդունող կաթան շատ կամաց կը պաղի, և գրէ թէ մէկ վայրկեանի մէջ նորէն եռացեալ ջրով կը լեցուի, ամեն անգամ որ շոգեշարժ մեքենան կայարանը կը հասնի:

Հիմա Ամերիկայի Նիւ Օրլէան քաղաքին մէջ թրամվէյի ընկերութիւն մը տան և ութ անկրակ շոգեշարժ մեքենայ կը գործածէ շատ յաջողութեամբ և ծախքի իննյողութեամբ: Իւրաքանչիւր կառքի համար եղած ծախքը դրէ թէ օրը մէկ լիրա աւելի պակաս կ'ըլլայ շոգեշարժ մեքենայ քան թէ ձի գործածելով: Շոգեշարժ մեքենան վարելը շատ դիւրին է և կառքը ժամն իբրը 9 մղոն կը քաշէ:

Թուրքիացի պատուաւոր և երեւել ընտանիք մը, որ այժմ Ռուսաստան կը բնակի, գոհացուցիչ ամսականաւ վարժուհի մը կ'ուղէ իւր տանը մէջ իւր երկու զաակաց կրթութեանը համար:

Ռուզողը կրնայ Մեղալուրեան վարժարանէն տեղեկութիւն ստանալ:

ՏՕՔԹՕՐ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Իւր բնակարանը փոխադրեց, Բերա Աղա ճամի Սաքըզ Աղաճի 12 թիւ տունը:

Ի Լ Ա Ն

Սիրքէճի իսկէլէիներէ տէմիրճի մաղաղաւարընն իթթիսալիներէ պուրունան մաղաղատա սօպա վէ մութպախ իշին քարտիֆ վէ Նիւքասթըլ մատէնքէ օմիրի սաթըլ մաքտա օլուպ' թէշրիֆէ բաղպէթ պուլունրան դէվաթըն հէր հալտէ խօշնուտ օլաճաղարը իլան օլընուր:

ՏՕՔԹԷՕՌ Ռ. Պ. ՃԷԼԱԼԵԱՆ

Բարիզի և Պէլճիքայի բժշկական վարժարանաց ընթացքն աւարտած բլլալ և մասին տիրոջն ընդունած բլլալով այժմ հաստատած է իւր բնակութիւնն Բերայ թարապաչի ճատտէսի թիւ 189 տունը ուր կիրակի օրերը ժամը 6 էն մինչ 9ը և ամեն օր մինչ ժամը 4 յատուկ հիւանդներ պիտի ընդունի: Ասոնցմէ 'ի զատ ամեն ուրբաթ օրերը ժամը 6էն մինչև 9 դարձեալ իւր բնակարանը և ամեն երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերը 7էն մինչ 9ը Պահճէ Գաբու թիւ 24 Իքի գաբուլը Մինապեան էֆէնտիի դեղարանը, ձրի հիւանդներ պիտի ընդունի: 25 հոկտ.

Մէշուր կէօզ թապիպի Ալի պէյ Սէն Բէթէրպուրկտան պու տէֆա ըՍտանպուլա կէլիպ, բազար էրթէսի կիւնէրի սապահըն սա'աթ Ատէն ախշամըն 8 էնէ գատար կէօզ աղըընա խայրաթ պաքմաք վէ ֆաքըրլարա լիւզիւմ օլան իլաճարը տախի քէնտի պէտէլիներէն խայրաթ վէրէճէյիի իլան իտէր: Սա-

գին օլտուղու մահալ Կոսկատա էշէկ Չէշմէսի ճատտէսինտէ Սըղթօս սօքաղըն քարշուքէտա Նմր. 15 մուրագգամ խա'էտէ տիր, Իքթիզասը օլան' սաքին օլտուղու մահալը Կոսկատա էճղաճը ֆիւշիւքեանլարտան տա սիւալ իտէպիլիր, Բազար կիւնլէրի թաթիլ տիր:

Բարիզու բժշկական համալսարանի աշակերտ Տօքթէօր Մ. ՀէֆիՄԵԱՆ, կը շարունակէ ձրի հիւանդ խնամել աւան երեքշաբթի և ուրբաթ օրերը, ժամը 6 էն մինչև 8ը, Եէնի քարուի դրան կից ազգային Եկեղեցույ կալուածներէն եղող ընկերութեան կեդրոնը: ՎԵՐՈՅԻՇԵԱԼ ՏՕՔԹԷՕՐԸ փնտուղները կրնան զինքը հարցընել Աք-Սէրայ թիւ 121 Կ. ՇԱՔԱՐԵԱՆԻ դեղարանը: յնվ. 15


Ինսանա արիզ օլան սըղը իլէթի սօղուքտան հասըլ օլմազ իսէ տէ պուքէմիք իշինտէ ֆէնուզ պիր սարը սուտան իպարէթ օլուպ ֆազաթ պուճուն պազըսը վազթը կէշմիշ վէ լայըգըլա թէմէլ թութմուշ վէ պազըսը էթ իլէքէմիք արասընտա գալմըշ աղըըյա պաշգաճա մալիւճէ օլունմադ վէ հըֆաըյա Սլլահ թալեա նուզուլ իլէթինտէն վէ մէրագտան միւնազատան արիզ լան Եէլտէն պաշգաթալընը սօղուգտան հասըլ օլան տօգուզ օն սէնէլիք տախի օյատտա' Եէնէ շարէսի պուլուն մաք վէ էօքսիւրիւկէ վէ կէօքիւս թըքանըկընա պէլ կէվէշկիլիի վէ մազաթտա բէյտահ օլան սըղըը մայասըլտ մալիւճէ վէրմէք իւզրէ սարըլըքտա քէսրի մէշուր Ուստա Սիմօն պուլունուր Մահմուտ-ֆաշա ճամիսինին ալսուտնտա օրթատաքի գահվէտէ Իքթիզա էտէնէրին գահվէի մէքըրիէ կէլմէլէրի վէ իճապընա կէօրէ թարիֆ վէ էտիլիէսինի պազմաք իշուն պունտան ագտէմ իլան էթմիշ իսէ տէ մէքըրի իլէթլէրին իւպէսի իշուն պուքէրէ Եէնէ իլան իտէր: Վէ սըղը իլէթի 24 սաաթտա տըն շարը չըգարըրմ վէ գասըգ իլէթիիտէ իճրասընտա պուլունուրը: Գառնընտա պասուր օլան պիլ սանճը վէրիւր իսէ օնուտա իճրասընտա պուլունուրը:

ԴԱՍԱՐԱՆ

ԵՈՒՍՈՒՑԵԱՆ ԽԱՆԻ ՄԷՁ ՅԱՐԿ Ա. ԹԻ 1

Յիշեալ դասարանի մէջ հետեւալ ուսումները դիւրուսոյց եղանակաւ կ'աւանդուին ամէն օր. Տաճկերէն Դասաստու Պ. Խօճասըրեն, Գաղղիարէն Ե. Մուրատեն, Տօմարակալութեան Ե. Զայերէն Թ. Կարազեան Թուարանութիւն Ե. Բիշատենէն Անդղիարէն ալ պիտի յաւելի. ծնօղը կ'ամ դասառուք կա-

տարելապէս գոհ պիտի բլլան. դասարանիս օրինաւորութեանը համար ամէն կարգաւարութիւն 'ի գործ դրուած



Հ. ՅՈՎ ՍԷՓԵԱՆ

ԹՈՒՂԱՅ ՅԱՊՐԻԿԱՍԸ ՊԵՏԻՒՔՏԵՐԻ

Էւրոպատան կեղէն հէր ճընս տէլիքլի թուղլալարըն պիր այնքսը, զիքը օլուն ֆապրիգատա մաքինայ ըլա իլիթա օլունուր:

Վէ քէրիճ թուղլանըն' շիմտիէ տէկին Սթանպուլտա իմալ օլունանլարտան զիատէ զայէթ ալեա ճընսլա, վէ օճաքլարա մախսուս տէլիքլի քէրիճ թուղլալար ետքըմաքտա տըր:

Պունլար էհվէն ֆիւթլա ֆիրուլթ օլունուր:

Վէ եարու սահիպլէրին սուհուլթ օլմաք իշին իսթէնիլէն մահալէ կէօնա էրիլէպիլիր:

Իքթիզասը օլանըն, Պէօյլեքտերէտէ մէքըրի ֆապրիգայա, վէ եախօտ ըՍտանպուլտա Յինճանճըլար եօգուլընտա Ամրիգան խանըն ալթընտա, Եզնակեա' խաշատուր աղանըն Նումերօ 27 մաղաղասընա միւրաճաաթ էլլէմէլէրի

ԵՂԱՅՐ ՅԱԿՈՒՐՈՍ

ՀԵՂԻՆԱԿ Կ. ԲՕԼ ՏԸ ԳՕԲ ՀՐԱ ՏԱՐԱԿԻՁ Մ. Խ. ԵՆՉԷՆԻՃԷՆ

15 տետրէ բաղկացեալ հետաքրքրական և ծիծաղաշարժ պատմութիւն մ'է, որ տեստըր առ տետր պիտի հրատարակուի գին միոյ տետրի 40 փարայ կը ծախուի Մահմուտ-Բուշայ Թօհաֆճի ճանիկ ազայի խանութը, բոլոր շայ գրաւաճառներու և կամուրճի գլխու պարագան և լրագրածախ ձրուիչներու ձեռամբ:

ՕՐԱՑՈՅՑ

ՊՐԸ

1875

ԹՈՒՂԱՅԱՆԻՆ

Յօրինեալ յերթիս քահնայէ [Խապիւշի կը ծախուի Դրաւաճառաց] քով 'ի գին 60 փարայ:

Կեդրոնատէղին է Մերճանը ֆաստըրմաճի խան վերնայարկ թիւ 28, Վերոյիշեալ սենեակը յաճախորդահամար բաց է ամեն օր ժամը 4 1/2 էն մինչև 6:

ՏԷՐ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

ՕԳՈՒՆ ԽՕՃԱՍԱՐԵԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ Օ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ